Սույն աշխատությունում քննարկվող հիմնահարցերի շրջանակների ընտրությունը կատարված է հետևյալ երկու չափանիշներով.

1. Լիցենզավորման նշանակությունն ու դերը քաղաքացիների, հասարակության և պետության շահերն տնտեսական գործունեության վնասակար կամ վտանգավոր ազդեցությունից պաշտպանելու, և դրա հետ մեկտեղ տնտեսական գործունեության առավել հնարավոր ազատականություն ապահովելու համար.

2. Լիցենզավորման ինստիտուտի, որպես իրավունքի նորմերի առանձնացված համակցության, անբավարար ուսումնասիրված լինելը և տնտեսական գործունեության լիցենզավորման հետ կապված մի շարք հարցերի բանավեճային բնույթը: Այսինքն, հեղինակի նպատակն է իրականում գոյություն ունեցող իրավական հիմնահարցերի լուծման ուղիների որոնումը, որոնց վերաբերյալ որոշակիության և հստակության, Հայաստանի Հանրապետության ինչպես նորմատիվ, այնպես էլ համապատասխան գիտական աղբյուրներում, բացակայում է:

Տնտեսական գործունեության լիցենզավորման իրավական հիմնահարցերը քննարկելիս նախ անհրաժեշտ է պարզություն մտցնել լիցենզավորման նշանակության և նրա մակրոտնտեսական դերի առանցքային հարցում, որպեսզի հնարավոր լինի հստակեցնել քննարկվող ինստիտուտի շրջանակները, որոնցով այն տարբերվում է հարակից այնպիսի ինստիտուտներից, ինչպիսիք են տնտեսական գործունեության սուբյեկտների պետական գրանցումը և տնտեսության պետական կարգավորման այլ մեթոդները (հարկումը, սերտիֆիկացումը և այլն):

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է լիցենզավորման ինստիտուտը ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից.

1. Լիցենզավորումը որպես տնտեսական գործընթացների կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտություն,

2. Լիցենզավորումը որպես տնտեսության պետական կարգավորման համալիր մեթոդ,

3. Լիցենզավորումը որպես տնտեսական գործունեության ազատականացման միջոց,

4. Լիցենզավորումը որպես պետական բյուջեի համալրման միջոց:

Հետազոտության առանձին կողմ է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության և քրեական օրենսդրության, մասնավորապես, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար պատասխանատվություն նախատեսող նորմերի ուսումնասիրությունը:

Անհրաժեշտ է նկատել, որ տնտեսական գործունեության լիցենզավորման իրավական հիմնահարցերի ուսումնասիրությունը չի սահմանափակվում միայն լիցենզիաների ստացման, վերացման, կասեցման, անվավեր ճանաչման, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմերի ուսումնասիրությամբ և քննարկվող ոլորտում հասարակական հարաբերությունների գործուն կարգավորման վրա այս կամ այն չափով ազդեցություն ունեցող մի շարք այլ նորմեր է ընդգրկում:

Սույն հետազոտության եզրահանգումների հիմնական մասը նպատակահարմար է շարադրել «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի ձևով:

Հետազոտման մեթոդները. Նկատի ունենալով ատենախոսությունում վերլուծվող հարցերի շրջանակը և դրանից բխող հետազոտման լայն մեթոդաբանական եղանակների օգտագործման անհրաժեշտությունը, ուսումնասիրություններ կատարելիս հեղինակը ձգտել է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են դիալեկտիկական, պատմական, տրամաբանական և համեմատական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը. Լիցենզավորման ինստիտուտի հետ կապված բազմաթիվ հիմնահարցերի և խնդիրների առկայությունը պայմանավորված է նրանով, որ Հայաստանի թե իրավարանության ու տնտեսագիտության, և թե գործնական կյանքի համար այն նորույթ է: Մասնավորապես, Հայաստանի, Ռուսաստանի և նախկին խորհրդային հանրապետությունների օրենսդրությունում լիցենզավորման ինստիտուտի առաջացման պահից, վերջինիս ընդամենը մի քանի հետազոտություն է նվիրվել: Ըստ որում, աշխատությունների մեծամասնությունում լիցենզավորումը լուսաբանվել է տնտեսության պետական կառավարման մյուս մեթոդների, իսկ մի շարք աշխատություններում էլ՝ վարչական, քաղաքացիական, տնտեսական, ձեռնարկատիրական իրավունքի ինստիտուտների հետ համատեղ: Այդ առումով լիցենզավորման ինստիտուտի վերաբերյալ որոշակի ուսումնասիրություններ են կատարվել Յու.Տիխոմիրովի, Յու.Կոզլովի, Ա.Ալյոխինի, Օ.Օլեյնիկի, Գ.Օսնոյկովայի, Կ.Տոտևի, Կ.Ռիվկինի, Ա.Պիկուլկինի և մի շարք այլ հեղինակների կողմից: Հայաստանում լիցենզավորման վերաբերյալ հրապարակվել է ընդամենը մեկ հոդված՝ տնտեսագիտության դոկտոր Ա.Մարկոսյանի կողմից[6]:

Վերը նշված հանգամանքներն էլ որոշում են սույն հետազոտության գիտական նորույթը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

Լիցենզավորման հիմնահարցերի ուսումնասիրությամբ հեղինակը հանգել է հետևյալ եզրահանգումներին, որոնք ներկայացվում են պաշտպանության.

1. *Լիցենզավորումը* տնտեսության ոլորտում պետական կառավարման մեթոդ է, որն ապահովում է հատուկ այն պայմանների՝ նորմերի, ստանդարտների, ծրագրերի, նորմատիվային կանոնների, կատարումը, որոնց չկատարելը կարող է վնասակար կամ վտանգավոր հետևանքներ ունենալ մարդկանց, հասարակության, պետության շահերի, ինչպես նաև շրջակա միջավայրի համար և այդ պատճառով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը

[6] Տես՝ Ա.Մարկոսյան. Մեկնաբանություններ Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի վերաբերյալ // Հարկային տեղեկատու. 1993. թիվ 1.

ենթակա է դատարեցման ոչ թե ընդհանուր՝ դատական, այլ՝ հատուկ՝ վարչական կարգով՝ վնասի առաջացումը կանխարգելելու կամ առաջացած վնասի խորացումը կանխելու համար:

2. Լիցենզավորումը պետական բյուջեի համալրման միջոց է, քանի որ լիցենզիա ստանալու համար լիցենզիայի հավակնորդը պետական տուրք է վճարում: Միաժամանակ, պետբյուջեի համալրման լիցենզավորման գործառույթը օժանդակ է և գործունեությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների շարքին դասելիս, այն որպես լիցենզավորման նպատակ դիտվել չի կարող, որովհետև պետական բյուջեի համալրման ուղղակի գործառույթը դրված է տնտեսության պետական կարգավորման այլ մեթոդների, մասնավորապես՝ հարկման մեթոդի, վրա:

3. Լիցենզավորումը կարող կատարել տնտեսական գործունեության ազատականացման միջոցի գործառույթ, քանի որ սեփականության ձևերի հավասարության պայմաններում ազատ շուկայի էությանը խորթ է պետական մենաշնորհ հանդիսացող տնտեսական գործունեության գոյությունը և այդ գործունեության տեսակներին անհրաժեշտ է տալ լիցենզավորման ենթակա գործունեության կարգավիճակ, դրանով հնարավորություն ընձեռնելով այն նաև ոչ պետական առևտրային սուբյեկտների կողմից իրականացնելու համար:

4. Լիցենզավորման ինստիտուտի սկզբունքներն են.
- ◊ Տնտեսական գործունեության *ազատ իրականացումը*,
- ◊ Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների *անհատականությունը*,
- ◊ Լիցենզավորման *բացառիկությունը*,

5. Լիցենզավորման ինստիտուտը վարչա-իրավական ինստիտուտ է, քանի որ կարգավորում է տնտեսության ոլորտի պետական կառավարման հետ կապված հասարակական հարաբերություններ, կարգավորվող հարաբերություններում միշտ սուբյեկտներից մեկը պետական կամ տարածքային կառավարման մարմին է և լիցենզավորման ինստիտուտին բնորոշ է վարչական իրավունքի իմպերատիվ մեթոդը:

6. Լիցենզավորման բնագավառի հիմնահարցերը պայմանավորված են այդ բնագավառում ենթաօրենսդրական ակտերի բազմությամբ ու նրանց միջև եղած հակասություններով և հասունացել է հանրապետությունում համապատասխան միասնական օրենսդրական ակտի ընդունման անհրաժեշտությունը: Հեղինակի այդ առաջարկությունը ձևակերպված է «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի հեղինակային նախագծի ձևով, որը ներկայացվում է ատենախոսության հավելվածում:

7. Առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեության իրականացման համար վարչական և քրեական պատասխանատվություն պետք է առաջանա, հավասարապես, եթե այդ գործունեությունը ձեռնարկատիրական է, բանկային, կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրականացվում է ձեռնարկություններում, բանկերում, իրավաբանական այլ անձանց շրջանակներում, ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռներեցների կողմից, կախված չէ այդ գործունեությունը իրականացնող սուբյեկտների սեփականության ձևից և շահույթ ստանալու հանգամանքից: Այդ մասին համապատասխան առաջարկությունները ներկայացվել են ՀՀ Ազգային Ժողովի Պետա-իրավական հարցերի մշտական հանձնաժողով, որտեղ քննարկման առարկա են դարձել:

<u>Ատենախոսության գործնական նշանակությունը.</u>

1. Աշխատության գործնական նշանակությունն առաջին հերթին պայմանավորված է նրա արդիականությամբ, որովհետև ինչպես Հայաստանը, այնպես էլ հետխորհրդային տարածքի երկրները բոլորովին վերջերս են ձեռնամուխ եղել շուկայական պայմանների տնտեսական իրականությանը կիրառելի տնտեսական օրենսդրության ստեղծմանը: Հետազոտության մեջ արված եզրահանգումներն ու առաջարկությունները, կարող են հաշվի առնվել տնտեսության պետական կառավարման և, հատկապես, լիցենզավորման վերաբերյալ մոտեցումներն ու հիմնադրույթները մշակելիս:
2. Աշխատության որոշ բաժիններ կարող են օգտագործվել որպես «Վարչական իրավունք», «Վարչական պատասխանատվություն», «Ձեռնարկատիրական իրավունք», «Քրեական իրավունք-Հատուկ մաս» դասընթացների կիրառական ձեռնարկներ:

3. Հետազոտության եզրահանգումները կարող են նշանակություն ունենալ ՀՀ ինչպես տնտեսական գործունեության լիցենզավորումն իրականացնող պետական և տարածքային կառավարման, այնպես էլ դատախազական, քննչական և հարկային մարմինների համար:
4. Հետազոտության արդյունքում մշակված «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում և քրեական օրենսդրությունում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունները կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում օրինաստեղծ գործընթացում և հեղինակի կողմից ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը.</u>

Աշխատությունում կատարված հետազոտությունների արդյունքում առաջացած եզրահանգումները՝ «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում և ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ձևով, հեղինակը ներկայացրել է ՀՀ Ազգային Ժողով:

Միաժամանակ, առաջադրված դրույթները օգտագործվել են ՀՀ դատախազության կողմից տնտեսական, սոցիալական և բնապահպան ոլորտներում ուսումնասիրություններ կատարելիս:

<u>Հրապարակումները.</u> Ատենախոսության հիմնական դրույթների վերաբերյալ հեղինակի կողմից հրապարակվել է 7 հոդված:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը շարադրված է 177 էջի վրա, բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (տասնվեց պարագրաֆներից), ամփոփումից, գրականության և իրավական ակտերի ու փաստաթղթերի ցանկերից, հավելվածից («Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի հեղինակային նախագիծ):

Ներածության մեջ հիմնավորվում են աշխատության աշխատության թեմայի արդիականությունը, հետազոտման նպատակները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում (Լիցենզավորման ինստիտուտի առաջացման սոցիալ-տնտեսական և իրավական նախադրյալները), որը բաղկացած է 2 պարագրաֆներից, վերլուծվում են շուկայական տնտեսության պետական կառավարման առանձնահատկությունները և բացահայտվում այն նոր օրինաչափությունները, որոնք արդի ժամանակաշրջանում ներհատուկ են տնտեսության ոլորտի պետական կառավարմանը, նշելով, որ այդ հասարակական հարաբերությունների կարգավորման արդյունավետ լուծումը ներկա պայմաններում հնարավոր է միայն ոչ այնքան համոզման, որքան հարկադրանքի տարրը պահելու միջոցով:

Թեև, շուկայական հարաբերությունների վրա հիմնված ժամանակակից տնտեսությանը բնորոշ են հասարակական հարաբերությունների շուկայական կարգավորիչներ, դրա հետ մեկտեղ, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է հանրային շահի պաշտպանությանը, շուկայի պայմաններում չի վերացվում նաև հասարակական հարաբերությունների վարչական բնույթ ունեցող արտաշուկայական կարգավորիչների դերը: Այդպիսի կարգավորիչների խմբին է դասվում նաև տնտեսական գործունեության լիցենզավորումը:

Երկրորդ գլխում (Լիցենզավորման էությունը), որը բաղկացած է 4 պարագրաֆներից, քննարկվում է լիցենզավորման էությունը և նրա 3 գործառույթները: Ելակետ ընդունելով ձեռներեցության ազատության սկզբունքը և ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի դրույթն այն մասին, որ սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը, հեղինակը, հիմնվելով նույն հոդվածում ամրագրված այն դրույթի վրա, որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը, նշում է, որ լիցենզավորումը տնտեսության պետական կառավարման մեթոդ է, որն ապահովում է այն հատուկ նորմերի, ստանդարտների, ծրագրերի, նորմատիվային կանոնների կատարումը, որոնց չկատարելը կարող է վնասակար կամ

վտանգավոր հետևանքներ ունենալ մարդկանց, հասարակության, պետության շահերի, ինչպես նաև շրջակա միջավայրի համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հեղինակը նշում է նաև, որ ձեռներեցության ազատության սկզբունքի ամրագրված լինելու և լիցենզավորման գոյության պայմաններում ազատ շուկային խոչք է պետական մենաշնորհ հանդիսացող տնտեսական գործունեության գոյության հանգամանքը: Այդ առթիվ առաջարկվում է պետական մենաշնորհ հանդիսացող տնտեսական գործունեությունը ամրագրել որպես լիցենզավորման ենթակա գործունեություն, դրանով հնարավորություն ընձեռնելով այն ոչ պետական ձեռնարկությունների կողմից իրականացնելու համար:

Բացի այդ հեղինակը նշում է, որ լիցենզավորումը բացի վերը նշված երկու գործառույթներից, կրում է նաև պետական բյուջեի համալրման գործառույթը, քանի որ լիցենզիա ստանալու համար ձեռներեցները պետական տուրք են վճարում: Միաժամանակ, բյուջեի համալրման խնդիրը օժանդակ է և լիցենզավորման նպատակի՝ հատուկ պայմանների կատարման ապահովման հետ, կապ չունի և որպես լիցենզավորման նպատակ դիտվել չի կարող, որովհետև պետական բյուջեի համալրման ուղղակի գործառույթը դրված է տնտեսության պետական կարգավորման այլ մեթոդների, մասնավորապես՝ հարկման մեթոդի, վրա:

Նույն գլխում հեղինակի կողմից վերլուծվում է տնտեսության պետական կազավորման մեթոդների համակարգը և որոշվում դրանում լիցենզավորման տեղն ու նշանակությունը: Մասնավորապես, այդ առթիվ նշվում է, որ շուկայի պայմաններում տնտեսության պետական կարգավորումը իրականացվում է կարգավորման երկու խումբ մեթոդների միջոցով՝ ինքնուրույն և համալիր: Դրանցից, տնտեսության պետական կարգավորման ինքնուրույն մեթոդները (հարկում, ստանդարտացում և այլն) ծառայում են պետության անմիջական նպատակների իրականացմանը, իսկ համալիր մեթոդներն ապահովում են ինքնուրույն մեթոդների գործողությունը. պետական գրանցման մեթոդն ապահովում է հարկման մեթոդի գործողությունը, լիցենզավորումը՝ ստանդարտացման, արժութային կարգավորման, այլ մեթոդների և այլն:

Պետության անմիջական նպատակները՝ գանձարան գումարներ ստանալը, հասարակության, մարդկանց սոցիալական և տնտեսական շահերի պաշտպանությունը և այլն, իրականացվում են տնտեսության պետական կարգավորման ինքնուրույն մեթոդների միջոցով, այսինքն այն մեթոդների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր

սեփական նշանակությունը. հարկման մեթոդը՝ գանձարան գումարների մուտքն է ապահովում, ստանդարտացման մեթոդը՝ տարբեր բնագավառներում ապահովում է ստանդարտների կատարումը, արժութային կարգավորումը՝ արժույթի հետ կապված գործառնությունների օրինականությունն ու պետության առջև դրա հետ կապված պարտավորությունների կատարումն է ապահովում և այլն: Տնտեսության պետական կարգավորման համալիր մեթոդներն ընդամենն ապահովում են ինքնուրույն մեթոդների գործողությունը:

Նույնն էլ վերաբերում է լիցենզավորման մեթոդին: Լիցենզավորումը տնտեսության պետական կարգավորման համալիր մեթոդ է, որն ապահովում է որոշակի նորմերի, ստանդարտների, ծրագրերի, նորմատիվային կանոնների, այսինքն՝ հատուկ պայմանների կատարումը: Այն դեպքում, երբ ինքնուրույն մեթոդների գործողությունը բավարար չէ անբարենպաստ հետևանքների կանխման համար, ապա առաջանում է լիցենզավորման գործողության անհրաժեշտությունը, որի միջոցով էլ ապահովվում են այն նորմերի, ստանդարտների, ծրագրերի, նորմատիվային կանոնների կատարումը, որոնց չկատարելը պետության, հասարակության, մարդկանց շահերի, ինչպես նաև շրջակա միջավայրի համար կարող է առաջացնել վնասակար կամ վտանգավոր հետևանքներ:

Այսինքն, լիցենզավորումն ինքնուրույն կարգավորման գործառույթ ունենալ չի կարող:

<u>Երրորդ գլխում</u> (Լիցենզավորման ինստիտուտի իրավաբանական բնույթը), որը բաղկացած է 5 պարագրաֆներից, լուսաբանվել է լիցենզավորման ինստիտուտի հասկացությունը, առարկան, մեթոդը, կառուցվածքը, որպես վարչահրավական առաջատար ինստիտուտի նրա տեղը իրավունքի համակարգում, բացահայտելով նրա սկզբունքներն ու խնդիրները:

Հեղինակը նշում է, որ լիցենզավորման ինստիտուտը՝ վարչահրավական ինստիտուտ է, քանի որ կարգավորում է տնտեսության ոլորտի պետական կառավարման հետ կապված հասարակական հարաբերություններ, կարգավորվող հարաբերություններում միշտ սուբյեկտներից մեկը իշխանական լիազորություններով օժտված պետական կամ տարածքային կառավարման մարմին է և լիցենզավորման ինստիտուտին բնորոշ է վարչական իրավունքի իմպերատիվ մեթոդը: Նշված հատկանիշների շնորհիվ

լիցենզավորման ինստիտուտը պատկանում է վարչական իրավունքի ճյուղին:

Վերլուծելով լիցենզավորման ինստիտուտի սկզբունքները, հեղինակը նշում է, որ դրանք են.

◊ Տնտեսական գործունեության *ազատ իրականացումը* - այսինքն, տնտեսական գործունեության իրականացումը ի սկզբանե պետք է դիտել ազատ, լիցենզավորմանը չտալով ինքնանպատակի բնույթ,

◊ Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների *անհատականությունը* - այսինքն, գործունեության տեսակը որպես լիցենզավորվող ճանաչելիս պետք է առաջնորդվել ոչ թե այդ գործունեության արտաքին բնութագրով (օրինակ, եթե գործունեության տեսակը կապված է բժշկության կամ ֆինանսների հետ, ապա այն պարտադիր պետք է լիցենզավորվի), այլ պետք է ուսումնասիրել դրա հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր նորմերը, պարզել, թե դրանց մեջ կան արդյոք այնպիսիք, որոնց չկատարելը կարող է հանգեցնել վնասակար կամ վտանգավոր հետևանքների, և այդ ժամանակ միայն որոշել, այդ գործունեության տեսակի լիցենզավորման անհրաժեշտությունը,

◊ Լիցենզավորման *բացառիկությունը* - այսինքն, տնտեսական գործունեության տեսակը որպես լիցենզավորվող պետք է ճանաչվի միայն այն դեպքում, երբ ակնկալվող վնասակար կամ վտանգավոր հետևանքների կանխարգելումը կամ առաջացած հետևանքների խորացման կանխումը անհրաժեշտ է իրականացնել օպերատիվորեն, ինչպես նաև այդ պատճառով գործունեության դադարեցումն իրականացնել ոչ թե դատական, այլ՝ վարչական կարգով:

Նույն գլխում ուսումնասիրվել է լիցենզավորման կարգը և դրա հետ կապված մի շարք հարցեր, որոնք վերաբերում են լիցենզիա տրամադրելուն, տրամադրումը մերժելուն, լիցենզիոն հայտերի քննարկմանը, լիցենզիոն փորձաքննության կատարմանը, լիցենզիայի կասեցմանը, վերացմանը, անվավեր ճանաչմանը և այլն: Եղած հիմնահարցերը բացատրվում են քննարկվող բնագավառում ենթաօրենսդրական ակտերի բազմությամբ ու նրանց միջև եղած հակասություններով, որից հետևում է հանրապետությունում համապատասխան օրենսդրական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Նույն գլխում վերլուծվել են լիցենզավորման բնագավառի տերմինաբանության որոշ հիմնահարցեր: Հեղինակը փորձել է

հստակեցնել այդ հարցում եղած մոտեցումները, դրանով լիցենզավորումը տարանջատելով այլ հասկացություններից, և առաջին հերթին՝ արտոնագրումից: Այդ առթիվ ատենախոսությունում նշվում է, որ ի տարբերություն լիցենզավորման, արտոնագրով պետության կողմից պաշտպանվում և հաստատագրվում է գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի իրավունքը: Արտոնագրով հաստատագրվում է արդյունաբերական սեփականության օբյեկտի ճկատմամբ հեղինակությունը, օբյեկտի առաջնությունը և օգտագործման բացառիկ իրավունքը[7]: Տնտեսական գործունեության *լիցենզիա* տերմինը նշանակում է պետության կողմից տրվող հատուկ պայմանների հետ կապված գործունեության թույլտվություն: Տվյալ համատեքստում այլ տերմինների օգտագործումը (արտոնագիր, գրանցում և այլն) չեն բխում լիցենզավորման, որպես տնտեսության պետական կարգավորման մեթոդի էությունից:

Չորրորդ գլխում (Պատասխանատվությունը լիցենզավորման բնագավառում), որը բաղկացած է 5 պարագրաֆներից, հետազոտվել են լիցենզավորման բնագավառի իրավապահպան ոլորտները և դրանց հետ կապված մի շարք հիմնահարցեր: Հեղինակը գտնում է, որ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեություն իրականացնելու համար վարչական կամ քրեական պատասխանատվության պետք է ենթարկվեն այդ գործունեությունը իրականացնող բոլոր անձինք, հավասարապես, եթե այդ գործունեությունը

◊ Ձեռնարկատիրական է, բանկային կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող,

◊ Իրականացվում է ձեռնարկություններում, բանկերում, իրավաբանական այլ անձանց շրջանակներում, ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռներեցների կողմից,

◊ Կախված չէ այդ գործունեությունն իրականացնող սուբյեկտների սեփականության ձևից,

[7] Տես՝ «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 4 հոդված // ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր. 1993. թիվ 15/16. հոդ. 276, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք. գլուխ 65 // ՀՀ պաշտոնական տեղեկագիր. 1998. թիվ 17 (50). էջ 385

◊ Շահույթ ստանալուն հանգեցրել է կամ չի հանգեցրել:

Վերոգրյալը վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169 և ՀՀ քրեական օրենսգրքի 155-1 հոդվածներում իր ամրագրումն է գտել բոլորովին վերջերս՝ նաև հեղինակի կողմից ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով ներկայացված համապատասխան առաջարկությունների քննարկման արդյունքում:

Ամփոփման մեջ տրվում են ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների համակարգված եզրահանգումները:

Գրականության ցանկում ընդգրկված են 45 մենագրություններ, 41 գիտական հոդվածներ և պարբերական մամուլի 24 հրապարակումներ:

Իրավական ակտերի և փաստաթղթերի ցանկը բաղկացած է 174 օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերից ու փաստաթղթերից:

Հավելվածը ներկայացված է «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի ձևով: Օրինագիծը բաղկացած է 3 գլուխներից և 20 հոդվածներից:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հետևյալ հրապարակումներում

1. *Ա.Միրումյան.* Պետական գրանցման և լիցենզավորման վերաբերյալ օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության հիմնահարցերը // Օրենք և իշխանություն. 1997. թիվ 1-3. էջեր 44-49
2. *Ա.Միրումյան.* Լիցենզավորման հասկացությունը Հայաստանի իրավունքում. // Օրենք և իշխանություն. թիվ 8. 1997. էջեր 33-38
3. *Ա.Միրումյան.* Լիցենզավորման կարգի որոշ հիմնահարցեր. // Իրավունք և օրինականություն. թիվ 3 (13). 1997. էջեր 39-44

1. *Ա.Սիրունյան.* Ընկալի պայմաններում տնտեսության պետական կարգավորման որոշ հիմնահարցեր. // Օրենք և իշխանություն. թիվ 12-13. էջեր 53-56
2. *Ա.Սիրունյան.* Տնտեսական գործունեության իրավական կարգավորման որոշ հիմնահարցեր // Իրավագիտության հարցեր. 1998. թիվ 1. էջեր 66-74
3. *Ա.Սիրունյան.* Լիցենզավորման ինստիտուտը Հայաստանի իրավական համակարգում // Օրենք և իշխանություն. 1998. թիվ 3-4. էջեր 70-79
4. *Ա.Սիրունյան.* Լիցենզավորման դերը պետական բյուջեի համալրման գործում // Հանձնված է տպագրության «Պետություն և իրավունք» հանդեսի թիվ 3 համարում:

Александр Сергеевич Сирунян

«ЛИЦЕНЗИРОВАНИЕ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»

Резюме автореферата диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности Ж.Б 00.02 «Публичное право (конституционное право, административное право, финансовое право)».

Научный руководитель-доктор юридических наук Хачатрян Г.М.

Официальные оппоненты-доктор юридических наук, профессор Айвазян Н.А., кандидат юридических наук Даниелян Г.Б.

Ведущая организация «Юридическая служба Национального Собрания РА».

В диссертации рассматривается ряд проблем, связанных с одним из ведущих административно-правовых институтов - институтом лицензирования экономической деятельности.

Принимая за основу принцип свободы предпринимательства и закрепленное статьей 8 Конституцией Республики Армения положение о том, что собственник по своему усмотрению владеет, пользуется и распоряжается принадлежащим ему имуществом, автор, ссылаясь на другое положение той же статьи Конституции о том, что реализация права на собственность не должна наносить ущерба окружающей среде, нарушать права и законные интересы других лиц, общества и государства, отмечает следующее:

В Республике Армения экономическая деятельность в любых ее формах осуществляется свободно. Исключением являются виды деятельности, которые сопряжены с выполнением таких норм, стандартов, программ, нормативных правил, невыполнение которых может повлечь вредные или опасные последствия для граждан, общества или государства, а также для окружающей среды, и в силу этого обстоятельства такая деятельность посредством лицензирования в необходимых случаях подлежит прекращению административном порядке.

На защиту выносятся следующие положения:

I. *Лицензирование*-метод государственного управления в сфере экономики, призванный обеспечить выполнение субъектами экономической деятельности выполнение особых условий- норм, стандартов, программ, нормативных правил, невыполнение которых может повлечь вредные или опасные последствия для интересов граждан, общества или государства, а также для окружающей среды и по этой причине для предупреждения вреда или предотвращения усугубления наступившего вреда лицензируемый вид деятельности, подлежит прекращению не в общем - судебном, а особом - административном порядке.

II. Лицензирование является ее средством пополнения государственного бюджета, так как для получения лицензии соискатель уплачивает государственную пошлину. Однако цель пополнения государственного бюджета не подлежит рассмотрению в качестве причины для признания вида деятельности лицензируемым, так как прямая функция пополнения госбюджета принадлежит иным методам государственного регулирования экономики, в частности методу налогообложения.

III. Лицензирование может являться также рычагом либерализации экономической деятельности, а именно: в условиях равенства форм собственности те виды деятельности, которые по законодательству РА признаны государственной монополией и право их осуществления принадлежит исключительно государственным предприятиям, должны быть транформированы в виды деятельности, подлежащие лицензированию, с целью их осуществления негосударственными субъектами хозяйствования.

IV. Принципами института лицензирования являются:

- ◊ *Свободное осуществление* экономической деятельности,
- ◊ *Индивидуальность* видов деятельности, подлежащих лицензированию,
- ◊ *Исключительность* лицензирования.

V. Институт лицензирования является административно-правовым институтом, так как его нормами регулируются отношения, связанные с государственным управлением в сфере экономики, одним из субъектов регулируемых отношений всегда является орган государственного или территориального управления и институту лицензирования присущ императивный метод административного права.

VI. Проблемы лицензирования обусловлены многочисленностью в этой области подзаконных актов и имеющимися между ними противоречиями, и назрела необходимость принятия в республике соответствующего законодательного акта. Это предложение оформлено в виде авторского законопроекта «О лицензировании экономической деятельности в Республике Армения», который автором был представлен в Национальное Собрание РА и прилагается к диссертации.

VII. За осуществление без лицензии деятельности, подлежащей лицензированию, административной и уголовной ответственность должна наступить, если эта деятельность предпринимательская, банковская или не преследующая цели получения прибыли, осуществляется в рамках предприятий, банков, иных юридических лиц, физическими лицами, в том числе индивидуальными предпринимателями, не зависит от формы собственности субъекта, осуществляющего эту деятельность и обстоятельства получения прибыли. Соответствующие предложения автора по этому вопросу были рассмотрены в постоянной комиссии по государственно-правовым вопросам Национального Собрания РА.

05.02.2013

Տպագրված է ՀՀ ԲՈՀ-ի պատվերով

Հանձնված է տպագրության 24.11.98 թ: Պատվեր 282: Տպաքանակ 60:

Տպագրված է «Դավիթ» կոոպերատիվի տպարանում:
Երեւան, Տերյան 72:

ՀՀ Ազգային գրադարան
NL1782117

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ. (00374 10) 511-771, www.court.am

№ ԴԴ-1 Ա-9262

«21» նոյեմբերի 2024թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիրունյան,

Ի պատասխան Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում 14.11.2024թ. մուտքագրված Ձեր դիմումի.

Տեղեկացվում է, որ Ալեքսանդր Սերգեյի Սիրունյանի

վերաբերյալ առկա են ՀՀ Վարչական դատարանի թիվ ՎԴ/8943/05/21, թիվ ՎԴ/6827/05/21, թիվ ՎԴ/1916/05/16, թիվ ՎԴ/1920/05/16, թիվ ՎԴ/1910/05/16, թիվ ՎԴ/6291/05/15, թիվ ՎԴ/6269/05/15, թիվ ՎԴ/6289/05/15, թիվ ՎԴ/6323/05/15, թիվ ՎԴ/6328/05/15, թիվ ՎԴ/6324/05/15, թիվ ՎԴ/6493/05/15, թիվ ՎԴ/6500/05/15, թիվ ՎԴ/6698/05/15, թիվ ՎԴ/6703/05/15, թիվ ՎԴ/6710/05/15, թիվ ՎԴ/6738/05/15, թիվ ՎԴ/6806/05/15, թիվ ՎԴ/6786/05/15, թիվ ՎԴ/7133/05/15, թիվ ՎԴ/7122/05/15, թիվ ՎԴ/7130/05/15, ՎԴ/0155/05/16, թիվ ՎԴ/0172/05/16, թիվ ՎԴ/0173/05/16, թիվ ՎԴ/0210/05/16, թիվ ՎԴ/0215/05/16, թիվ ՎԴ/0511/05/16, թիվ ՎԴ/0507/05/16, թիվ ՎԴ/0489/05/16, թիվ ՎԴ/0874/05/16, թիվ ՎԴ/0888/05/16, թիվ ՎԴ/0865/05/16, թիվ ՎԴ/1025/05/16, թիվ ՎԴ/1018/05/16, թիվ ՎԴ/1026/05/16, թիվ ՎԴ/1209/05/16, թիվ ՎԴ/1208/05/16, թիվ ՎԴ/1305/05/16, թիվ ՎԴ/1317/05/16, թիվ ՎԴ/1428/05/16, թիվ ՎԴ/1423/05/16, թիվ ՎԴ/1670/05/16, թիվ ՎԴ/1673/05/16, թիվ ՎԴ/4331/05/15, թիվ ՎԴ/5302/05/15, թիվ ՎԴ/5293/05/15, թիվ ՎԴ/5299/05/15, թիվ ՎԴ/5582/05/15, թիվ ՎԴ/5564/05/15, թիվ ՎԴ/5591/05/15, թիվ ՎԴ5836/05/15, թիվ ՎԴ/5839/05/15, թիվ ՎԴ/5843/05/15, թիվ ՎԴ/5837/05/15, թիվ ՎԴ/5821/05/15, թիվ ՎԴ/6032/05/15, թիվ ՎԴ/6024/05/15, թիվ ՎԴ/6026/05/15, թիվ ՎԴ/6023/05/15, թիվ ՎԴ/6272/05/15

վարչական գործերը, ինչպես նաև առկա են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/51182/02/21, թիվ ԵԱՆԴ/1701/02/10, թիվ ԵԴ/1380/02/20, թիվ ԵԿԴ/1252/02/13, թիվ ԵԿԴ/2816/02/13, թիվ ԵԱԴԴ/1196/02/12 քաղաքացիական գործերը, որոնցով վերոնշյալ անձը հանդիսանում է հայցվոր:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Ալեքսանդր Սերգեյի Սիրունյանի վերաբերյալ առկա են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/21967/02/20, թիվ ԵԴ/3508/02/20, թիվ ԵՇԴ/2014/02/15, թիվ ԵԿԴ/2636/02/15 քաղաքացիական գործերը, թիվ ԵԴ/32336/03/20 վճարման կարգադրությունը և ՀՀ Վարչական դատարանի թիվ ՎԴ/46231/03/13 և թիվ ՎԴ/16256/03/11 վճարման կագադրությունները որոնցով Ալեքսանդր Սերգեյի Սիրունյանը հանդիսանում է պատասխանող:

Հարկ է նշել, որ համապատասխան ուսումնասիրությունն իրականացվել է «Դատական համակարգ» տեղեկատվական համակարգչային ծրագրի միջոցով (սկսած՝ 2008 թվականից):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ**

Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչություն
Կատ.՝ Ա.Վարդանյան
Հեռ (010) 511-831

Трудовая книжка

ПТ-I № 0586748

Фамилия Сарумян

Имя Александр

Отчество Сергеевич

Дата рождения 25.11.1971г.
(число, месяц, год)

Образование среднее
(н/среднее, среднее, н/высшее, высшее)

Профессия, специальность рабочий

Дата заполнения „05" августа 1986 г.

Подпись владельца книжки

М. П. ОТДЕЛ КАДРОВ

Подпись лица, ответственного за выдачу трудовых книжек

Жигалина
(разборчиво)

СВЕДЕНИЯ О РАБОТЕ

№ записи	Дата			Сведения о приеме на работу, и об увольнении (с указанием на статью,	о переводах на другую работу причин и со ссылкой пункт закона)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
	число	месяц	год			
1	2			3		4
1.	01	03	1986	Масленый Принята на работу в цех рабочей.	консервный з-д сезонную фруктовый	пр. 82-к от 1.03.86г.
2.	01	11	1986	Уволен с работы заверением	в связи с сезоном.	пр. 126-к от 1.11.86г.
				Ст. инспектор по кадрам		Мельник

СВЕДЕНИЯ О РАБОТЕ

ТТ-I № 0586748

№ записи	Дата: число	Дата: месяц	Дата: год	Сведения о приеме на работу, и об увольнении (с указанием на статью,	о переводах на другую работу причин и со ссылкой пункт закона)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
1	2			3		4
3.	25	11	1986	Принят на фрезеровщик	переведен на работу в цех рабочим	↓ пр. 137-к от 26.11.86г.
4.	01	09	1988	Уволен в связи с поступлением в ВУЗ.	с поступлением	пр. 133-к от 2.09.88г.
				Сан инспектор по кадрам		Печатью

СВЕДЕНИЯ О РАБОТЕ

№ записи	Дата			Сведения о приеме на работу, и об увольнении (с указанием на статью,	о переводах на другую работу причин и со ссылкой пункт закона)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
	число	месяц	год			
1	2			3		4
	19	08	88р	Принят на должность	Прик. по личному составу	Пр. п 192 §9
						19.08.88р.
	23	06	93р	Уволен по собственному желанию	Прик. по личному составу	№133 §10
						23.06.93р.

СВЕДЕНИЯ О РАБОТЕ

ТТ-I № 0586748

№ записи	Дата: число	Дата: месяц	Дата: год	Сведения о приеме на работу, и об увольнении (с указанием на статью,	о переводах на другую работу причин и со ссылкой пункт закона)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
1	2			3		4
				hh ynpn	peuoynpuu	
	01	09	1993	Ypuuuuyyyy 5	hh ynpnpeuoynpuu	hp. N 376
				unypuuuuuu u	peuuuynpuuuu	01.09.93p.
				npnpnu5 opuuyn	upp yuuynpuu5	
				ypuu nuuuy pun	ep ynpnpeuoy-	
				uynpuuuuuu		
	15	08	1994	Ypuuuuyyyy 5 hh	yuuynpeuoynpuu	hp. N 366
				unypuuuuuu u	peuuuynpuuuu	15.08.94p.
				npnpnu5 opuuyn	uoupp yuuynpuu5	
				ypuu nuuuy pun	yuuuuynpuuuu	
	13	01	1999	Ypuuuuyyyy 5 hh	9uuuuynp yuuynpeu-	hp. N 55
				peuuuynpuuuu	upuuuuyuu5	13.01.99p.
				uuuuuynp uuuuyn	uuuuuynpuuuu	

СВЕДЕНИЯ О РАБОТЕ

№ записи	Дата			Сведения о приеме на работу, и об увольнении (с указанием на статью,	о переводах на другую работу причин и со ссылкой пункт закона)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
	число	месяц	год			
1	2			3		4
				Принят в	Переведен	
	30	04	2004	Принят в	Переведен в	Пр. № 130
				Министерство	Министерство	30.04.04г.
				Чрезвычайных	Чрезвычайных	
				Ситуаций	Ситуаций	
				Заместителем	Заместителем	
				Начальника	Начальника	
	15	02	2005	Назначен	Назначен	Пр. № 189
				Министерство	Министерство	15.02.05г.
				Чрезвычайных	Чрезвычайных	
				Ситуаций	Ситуаций	
				Начальником	Начальником	
				Управления	Управления	
	28	03	2009	Уволен в	Переведен	Пр. № 246

СВЕДЕНИЯ О РАБОТЕ

ТТ-I № 0586748

№ записи	Дата: число	Дата: месяц	Дата: год	Сведения о приеме на работу, и об увольнении (с указанием на статью,	о переводах на другую работу причин и со ссылкой пункт закона)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
1	2			3		4
				принят[illegible]	[illegible]	28.03.09г.
	04	06	2009	[illegible]	[illegible]	пр. № 102
				[illegible]	[illegible]	04.06.09г.
				[illegible]		
				[illegible]		
				[illegible]	

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ՍԻՐՈՒՆՅԱՆ

Ինքնակենսագրություն

Ծնվել եմ 1971 թվականին Վրաստանի Հանրապետությունում՝ բժշկի ընտանիքում:

1993 թվականին ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1998 թվականին պաշտպանել եմ «Տնտեսական գործունեության լիցենզավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» թեմայով թեկնածուական ատենախոսություն, ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1997-2006 թվականներին Վաշինգտոն, Բուդապեշտ, Երևան, Լոս Անջելես քաղաքաներում անցել եմ ԱՄՆ Զարգացման միջազգային գործակալության (AID), Ամերիկայի փաստաբանների միության (ABA-CEELI), ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի կողմից կազմակերպված դատահրավական բարեփոխումներին և քրեական իրավունքի խնդիրներին վերաբերող վերապատրաստումներ:

1994-2009թթ. աշխատել եմ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում որպես վարչության դատախազ, ավագ դատախազ, Արարատի մարզի դատախազության դատախազ:

2001-2013թթ. դասավանդել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում:

2007 թվականին հանդիսացել եմ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահ:

2009 թվականից մինչև օրս հանդիսանում եմ «Սիրունյան» փաստաբանական գրասենյակի տնօրեն, Փաստաբանների պալատի փաստաբան:

Հեղինակել եմ 7 գիրք և 30 գիտական հոդված:

Ունեմ արդարադատության առաջին դասի խորհրդականի (գնդապետի) կոչում, դոցենտի գիտական կոչում:

Հանդիսանում եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ:

Ամուսնացած եմ, ունեմ 2 երեխա:

«Սիրունյան» փաստաբանական գրասենյակի տնօրեն, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան, արդարադատության առաջին դասի խորհրդական, դոցենտ

Ալեքսանդր Սիրունյան

22.11.2024